ԱՐԴԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄԱՏԻԿԱՅԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

Շ. Ս. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ժամանակակից գիտատեխնիկական հեղափոխության սոցիալ-փիլիսոփայական իմաստավորման մեջ էկոլոգիական պրոբլեմատիկայի բազմակողմանի և խորը վերլուծությունը առավել բնութագրական և հեռանկարային ուղղություններից է։ Ժամանակակից էկոլոգիական պրոբլեմների ծագման ու լուծման հարցերն անմիջականորեն առնչվում են ոչ միայն գիտության ու հասարակական պրակտիկայի, այլև քաղաքական գաղափարախոսության ոլորտների հետ։ Դրանում ևս արտահայտվում է ներկա էկոլոգիական իրավիճակի համապարփակությունը։ Գաղափարախոսական ասպեկտները (փաստորեն, տվյալ պրոբլեմի հասարակական-քաղաքական իմաստավորումը) առավել կարևոր են բնութագրելու էկոլոգիական պրոբլեմների շուրջը մղվող պայքարը։ Այդ գաղափարախոսական պայքարը օբյեկտիվորեն բխում է երկու հակադիր սոցիալ-տնտեսական ու քաղաքական համակարգերի գոյությունից և մրցակցությունից։ Համաշխարհային հակադիր սոցիալական համակարգերի առկայության դեպքում տնտեսականորեն և մեթոդաբանորեն անթույլատրելի է հասարակական մարդու էկոլոգիական գործունեության գիտական վերլուծությունն իրականացնել առանց այդ գործունեության կազմակերպման և իրականացման վրա կոնկրետ պատմական պայմանների ակտիվ ներգործության հաշվառման։

Շրջապատող բնական միջավայրի էկոլոգիական պրոբլեմների ծագման ու լուծման հարցերի սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմանների նշանակությունը պարզելու համար կարևորագույն դեր է խաղում այն գաղափարախոսական գործունեության մերկացումը, որն ուղղված է մարքս-լենինյան ուսմունքի դեմ։ Հատկապես ժամանակակից էկոլոգիական հարաբերությունների գաղափարախոսական ասպեկտների կապակցությամբ միանգամայն օրինաչափ է հետևյալ մեթոդաբանական պնդումը. «Մարքս-լենինյան փիլիսոփայության հրատապ պրոբլեմների պոզիտիվ մշակման պարտադիր պայմանն է այն գաղափարախոսական պայքարի համակողմանի լուսաբանումը, որը մշտապես մղվում է այդ պրոբլեմների շուրջը»[1]։

Ժամանակակից էկոլոգիական պրոբլեմների քննությամբ զբաղվող բուրժուական տեսաբանների գաղափարախոսական գործունեության բազմակողմանի մերկացման համար նպատակահարմար է ելնել այդ գործունեության երկու հիմնական, փոխկապակցված ասպեկտներից (տակտիկական և ստրատեգիական), որոնք ուղղված են ինչպես կոմունիստական աշխարհայացքի, այնպես էլ պրակտիկայի դեմ։

Մարդու կենսական միջավայրի պրոբլեմների շուրջն ընթացող գաղափարախոսական պայքարում բուրժուական գաղափարախոսության տակտիկական

---

[1] «Вопросы философии», 1976, № 1, стр. 16.

ասպեկտի նպատակն է ապացուցել և պրոպագանդել այն դրույթը, որի համաձայն. ա) մարդկային գործունեության անցանկալի հետևանքների առաջացման պատճառները «մարդ-բնական միջավայր» համակարգում ինչպես կապիտալիստական, այնպես էլ սոցիալիստական հասարակարգում նույնն են, բ) հասարակության գիտատեխնիկական և տնտեսական աճի ամենատարբեր բնույթի էկոլոգիական պրոբլեմների լուծման համար սոցիալիզմի հասարակական հարաբերությունները սկզբունքային նշանակություն չունեն։

Երկու սոցիալ-տնտեսական համակարգերի արմատական հակադրությունների համահարթեցման համար բուրժուական սոցիոլոգները ելնում են երկու հասարակարգերում արտադրության տեխնոլոգիական նույնականությունից։ Նրանք գտնում են, որ տարբեր հասարակարգ ունեցող երկրները նույն պատասխանատվությունն են կրում շրջապատող միջավայրի նկատմամբ սպառնալիք ստեղծելու գործում, պատճառաբանելով, որ «շրջապատող միջավայրին ուղղված գլխավոր սպառնալիքը ստեղծում են արևմտյան աշխարհի և սոցիալիստական աշխարհի առավել զարգացած տնտեսությունները»[2]։ Նման պնդման համար հիմք է ծառայում բնական միջավայրի վրա մարդու ակտիվ ներգործությունը։ Ըստ բուրժուական սոցիոլոգների՝ «բնության դեմ հաջող պայքարելու նպատակը միայն Միացյալ Նահանգների առանձնահատուկ սեփականությունը չէ։ Սոցիալիստական աշխարհը կիսում է այդ նույն հիմնական նպատակը և, հետևաբար, ստեղծում է նույն էկոլոգիական ճգնաժամը, ինչ-որ կապիտալիստական աշխարհը»[3]։ Իհարկե, առանձին դժվարություն չի ներկայացնում այն բանի գիտակցումը, որ թե՛ սոցիալիստական, և թե՛ կապիտալիստական հասարակարգում բնական ռեսուրսների օգտագործումը արտադրության զարգացման օբյեկտիվ նյութական նախադրյալն է։ Բայց ամբողջ խնդիրն էլ այն է, որ բնությունից օգտվելու սոցիալիստական և կապիտալիստական եղանակները սկզբունքորեն հակադիր են։ Այս է, որ կապիտալիզմի ջատագովները «մոռանում են» նշել։ Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի պայմաններում բնական հարստությունների շահագործման առանձնահատկությունն այն է, որ որքան զարգացած է արտադրությունը, այնքան մեծ է շրջապատող միջավայրին, մարդուն և հասարակությանը սպառնացող վտանգը։ Այս եզրակացության արդարացիությունը ընդունում են ռեալիստորեն մտածող բուրժուական էկոլոգները։ Կապիտալիստական հասարակարգում գոյություն ունեցող էկոլոգիական ճգնաժամի պատճառների վերլուծության հիման վրա է Ժ. Դորստը եզրակացնում, որ «բնության պահպանման բնագավառում արդի ամենահրատապ պրոբլեմը մեր տեսակի պաշտպանությունն է հենց մեզանից։ Բանական մարդուն հարկավոր է պաշտպանել արտադրող մարդուց»[4]։ Արտադրության կապիտալիստական եղանակի զարգացման և էկոլոգիական հակասությունների սրման միջև անմիջական կապը հաստատվում է հենց Ամերիկայի Միացյալ Նահանգների օրինակով, որին «բաժին է ընկնում ամբողջ աշխարհում մթնոլորտի, ջրի և հողի մեջ արդյունաբերական թափոնների արտանետվածքների ավելի քան 50 տոկոսը»[5]։

---

[2] G. J. Smith et al., Our Ecological Crisis: Ist Biological, Economic and Political Dimensions. New York, 1974. p. 79.

[3] Նույն տեղում, էջ 7։

[4] Ж. Дорст, До того, как умрет природа, М., 1968, стр. 128.

[5] В. Кудров, Противоречия научно-технической революции в условиях совре-

Թեև էլ պատահական չէ, որ պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի ջատագովներն այդքան մեծ տեղ են հատկացնում էկոլոգիական պրոբլեմների ծագման տեխնոլոգիական ասպեկտներին։ Անվիճելի է, որ արտադրողական ուժերի զարգացման ժամանակակից փուլում արտադրության կապիտալիստական և սոցիալիստական եղանակները ունեն նույն տեխնիկա-տեխնոլոգիական հիմք։ Շեշտը դնելով հասարակության գիտատեխնիկական և տնտեսական աճի անցանկալի, բացասական հետևանքների առաջացման տեխնոլոգիական պատճառների վրա, բուրժուական տեսաբանները «օբյեկտիվությամբ» փորձում են անտեսել սոցիալիստական հասարակարգի պատմական առավելությունները էկոլոգիական պրոբլեմների լուծման առումով։ Նենգափոխելով կոմունիստական շինարարության պրակտիկայի հաջողությունների պատճառները, բուրժուական հետազոտողները էկոլոգիական պրոբլեմների լուծման նվաճումները կրկին գնահատում են տեխնոլոգիական չափանիշով։ Այսպես, օրինակ, նրանք գրում են. «Դժբախտաբար, սոցիալիստական երկրների փաստերը սփոփանք չեն ներկայացնում, քանի որ նրանք չեն վկայում շրջապատող միջավայրի որակի նկատմամբ մեծ զգայության մասին»[7]։ Սակայն բնությունից օգտվելու սոցիալիստական եղանակի բարելավումը միշտ էլ եղել է մեր կուսակցության ուշադրության կենտրոնում։ «Մենք մեր քննադատներից լավ գիտենք մեր թերությունները, տեսնում ենք դժվարությունները,—ասաց Լ. Ի. Բրեժնևը կուսակցության XXV համագումարում։—Եվ մենք հաջողությամբ հաղթահարում ենք դրանք։ Մենք տեսնում ենք և գիտենք այն ուղիները, որոնք տանում են դեպի մեր հասարակարգի հետագա զարգացում և կատարելագործում»[8]։ Մինչդեռ բուրժուական հետազոտողները գիտակցաբար ոտնահարում են շրջապատող բնական միջավայրի պահպանության բնագավառում Սովետական Միության նվաճումները։ Նրանք պնդում են, որ սոցիալիզմը դեռ երկար ժամանակ կկողմնորոշվի միայն դեպի տնտեսական աճը. «Սոցիալիստական երկրները, կարող է պատահել, ավելի են տնտեսական աճ հետապնդում, քան մենք, և առայժմ պարգևները ստանում են նրանք, ովքեր գերազանցում են արտադրանքի արտադրության նորմաները. շրջապատող միջավայրի հաշվին իր ցանկացածին հասնելու գայթակղությունը ուժեղ է»[9]։

менного капитализма («Мировая экономика и международные отношения», 1976, № 3, стр. 61).

6 Այդ նպատակին «են ծառայում պարզունակ փաստերի վկայակոչումները, նման այն բաներին, որ ինչպես սոցիալիզմի, այնպես էլ կապիտալիզմի դեպքում քարածխի այրումը ապականում է օդը, քիմիական արտադրությունը թունավորում է գետերը, ավտոմոբիլների օգտագործած գազերը թունավորում են օդը նույնպես անկախ սոցիալական պայմաններից, ատոմային էներգիայի արտադրական կիրառումը ևս հղի է մարդկանց առողջության համար վտանգներով և այլն» (Т. И. Ойзерман, Исторический материализм и идеология «технического» пессимизма, М., 1976, стр. 53).

7 „To Live on Earth. Man and Environment in Perspective. A Resources of the Future Study". Baltimore—London, 1972, p. 172.

8 Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում (Զեկուցում ՍՄԿԿ XXV համագումարում, 1976 թ. փետրվարի 24-ին), Երևան, 1976, էջ 145։

9 „To Live on Earth. Man and Environment in Perspective. A Resources of the Future Study", p. 174.

Մեր գաղափարական հակառակորդները ճիշտ են միայն նրանում, որ սոցիալիզմը ավելի է շահագրգռված տնտեսական աճով, քան կապիտալիզմը։ Բայց դրա հետ միասին (և դա գլխավորն է) մեր հասարակության տնտեսական նվաճումները պլանաչափ ձևով օգտագործվում են բնության պահպանության միջոցառումների կարիքների համար։ Դա պետական հեռանկարային էկոլոգիական քաղաքականություն է։

Կարելի է պնդել, որ բուրժուական սոցիոլոգները իրենց ուշադրությունը գամելով ժամանակակից էկոլոգիական պրոբլեմների տեխնոլոգիական ասպեկտների վրա, անընդհատ փորձում են ընդգծել երկու հասարակական համակարգերի նույնականությունը՝ այդ պրոբլեմների ինչպես ծագման, այնպես էլ լուծման մեջ. Բացի այդ, նրանք հաճախ ուղղակի նենգափոխում են սոցիալիզմի պատմական իրողությունը և այն մատուցում առանց «տեխնոլոգիական» քողի։ Այսպես, օրինակ, Մ. Գոլդմենը գրում է. «Ինչպիսին էլ որ այնտեղ լինի, ելնելով սովետական փորձից, առայժմ հիմք չկա պնդելու, որ արտադրության միջոցների ազգայնացումը մեկ երկրում կամ ամբողջ աշխարհում ինչ որ չափով նպաստում է ապականումից շրջապատող միջավայրի պահպանմանը»[10]։ Այսպիսի հակակապիտալիստական և հասարակական առաջընթացի տեսանկյունից ռեակցիոն պնդման լավագույն պատասխանը մեր երկրի ավելի քան կեսդարյա պատմությունն է, որտեղ բնության պահպանությունը սովետական իշխանության առաջին իսկ տարիներից եղել է պետական կարևորություն ունեցող գործ։ Էկոլոգիական միջավայրը սոցիալիզմի պայմաններում յուրօրինակ հասարակական հարստություն է, որի պահպանմամբ շահագրգռված է ողջ հասարակությունը։ Սոցիալիզմի օբյեկտիվ տնտեսական և բնական միջավայրի պահպանման շահերը համընկնում են, մի բան, որը սկզբունքորեն անհնարին է կապիտալիստական հասարակարգում։

Մյուս կողմից, սխալ կլիներ պնդել, որ բուրժուական գաղափարախոսները քննադատաբար չեն վերաբերվում հենց կապիտալիստական հասարակարգին. «Արդյունաբերական արտադրության կազմակերպումը ազատ շուկայի միջոցներով,— գրում է Ի. Քոուիլլն,— մի քանի հետևանքներ է ծնում շրջապատող միջավայրի համար, որոնք չէին ընդունվի հասարակության անդամների կողմից, եթե նրանք ընտրության հնարավորություն ունենային, նույնիսկ եթե ընտրությունը ներառներ ծախսեր, որոնք նրանք կարողանային բաժանել միմյանց միջև»[11]։

Արևմտյան տեսաբանների դասակարգային սահմանափակությունը նրանց թույլ չի տալիս տեսնել և օբյեկտիվորեն գնահատել կապիտալիստական հասարակարգի դեմ ծառացած այլընտրանքը։ Այս տեսակետից, թերևս, բացառություն են շրջապատող միջավայրի պրոբլեմների հետազոտողներից մեկի՝ «ձախ էկոլոգ» Բ. Կոմոնների դատողությունները։ Բ. Կոմոնեն անդրադառնալով կապիտալիստական երկրներում էկոլոգիական ճգնաժամի սոցիալական պատճառ-

[10] M. I. Goldman, The Spoils of Progress: Environmental Pollution in the Soviet Union. Cambridge, Massachusetts, and London, 1972 (Մեջբերումը ըստ՝ И. Д. Лаптев, Социально-философские аспекты взаимодействия общества и природы, М., 1975, стр. 52).

[11] I. V. Kruttila, Environmental Effect of Economic Development. „America's Changing Environment", Boston, 1970, p. 166).

ներին, եզրակացնում է, որ «մասնավոր սեփականություն հանդիսացող ժամանակակից տեխնոլոգիան չի կարող երկար գոյատևել, եթե այն ավերում է հասարակական հարստությունը, որից կախված է էկոլոգիական ոլորտը։ Հետևաբար, գերազանցապես մասնավոր բիզնեսի վրա հիմնված տնտեսական համակարգը առավել անպետք և անարդյունավետ է դառնում կենսակառուցորեն կարևոր այդ հարստությունը տնօրինելու համար։ Նշանակում է, այդ հասարակարգը պետք է փոխել»[12]։ Առաջին հայացքից թվում է, թե այստեղ արմատականորեն մերժվում է կապիտալիստական տնտեսական համակարգը, բայց, ինչպես իրավացիորեն նկատել է Ի. Ֆրոլովը, «Կոմոնները չի ընդունում կապիտալիստական հասարակարգի նկատմամբ սոցիալիստական այլընտրանքը»[13]։

Այսպիսով, բուրժուական տեսաբանների և պրոպագանդիստների հիմնական դաղափարախոսակտն խնդիրն է հիմնավորել այն դրույթը, որ սոցիալիստական համակարգը սկզբունքորեն պատմական առավելություններ չունի մարդու կենսական ոլորտի էկոլոգիական հաշվեկշռի խախտումների կանխման հարցում։ Դա է հենց էկոլոգիական պրոբլեմների շուրջը գաղափարախոսական զավթողամոլության տակտիկական ասպեկտի էությունը։

Ժամանակակից պետական-մոնոպոլիստական կապիտալիզմը սոցիալիստական հասարակարգի դեմ մղվող իր գաղափարախոսական պայքարում կես ճանապարհին կանգ չի առնում։ Արևմտյան տեսաբանների ստրատեգիական նպատակն է ապացուցել, որ զարգացած կապիտալիզմն ընդունակ է լուծելու ոչ միայն հրատապ, այլև պատմական մերձավոր ապագայում հնարավոր էկոլոգիական պրոբլեմները։ Դրանում է ժամանակակից հասարակության զարգացման վերաբերյալ բուրժուական էկոլոգիական կոնցեպցիաների հիմնական դաղափարախոսական նպատակադրումը։

Վերջին տարիներս Արևմուտքում էկոլոգիական կանխագուշակումները մեծ համբավ են ձեռք բերել։ Դրանց անհրաժեշտությունը թելադրվում է այն հասարակական միջավայրով, որտեղ նրանք ձևավորվում են։ Այդ նշանակում է, որ ժամանակակից էկոլոգիական ֆուտուրոլոգիան կապիտալիստական կարգերի ճգնաժամային երևույթների արդյունքն է։ Էկոլոգիական կոնցեպցիաների կամ «աշխարհի մոդելների» վերլուծությանն ու քննադատությանը նվիրված հատուկ գրականության մեջ լայնորեն ներկայացված են «էկոլոգիական հոռետեսական» և «տեխնոլոգիական լավատեսական» տարբերակները։ Նշված կոնցեպցիաներում որոշակի փորձ է արվում ընդգրկել այն հիմնական պարամետրերը, որոնք գտնվում են փոխներգործության վիճակում և վճռականորեն ներգործում են հասարակության ապագայի վրա։ Մարդկության հետագա գոյության և զարգացման ուղիների բացահայտում՝ ահա թե ինչպես է մատուցվում այդ հետազոտությունների նպատակը։ Որպեսզի ավելի կոնկրետ անդրադառնանք այդ կոնցեպցիաներին, նշենք հոռետեսական կանխագուշակումները։ Այս իմաստով լավ օրինակ է «Աճի սահմանները» գիրքը, որը միաժամանակ «Հռոմի ակումբի»[14] առաջին զեկուցագիրն է։ Զեկուցագրի հեղինակներն օգտա-

---

[12] Б. Коммонер, Замыкающийся круг (Природа, человек, технология), Л., 1974, стр. 206—207.

[13] И. Т. Фролов, Прогресс науки и будущее человека (Опыт постановки проблемы; дискуссии; обобщения), М., 1975, стр. 105—106.

[14] «Հռոմի ակումբը» ստեղծվել է 1968 թ. և միավորում է բուրժուական աշխարհի տարբեր մասնագիտությունների ներկայացուցիչներին։ Նրա նպատակն է արդի կապիտալիստական հասարակարգի ճգնաժամային իրավիճակից դուրս գալու ուղիներ փնտրել։

գործելով Ջ. Ֆորեստերի սոցիոլոգիական կանխագուշակման մեթոդը, Դ. Մեդոուզի գլխավորությամբ հետազոտել են ինդուստրիալ հասարակության զարգացման անցանկալի հետևանքների պատճառները և դրանց վերացման ուղիները։ Իրենց հիմնական եզրակացությունները նրանք ձևակերպել են այսպես. «1. Եթե աշխարհի բնակչության, ինդուստրացման, ապականման, սննդի արտադրության և ռեսուրսների սպառման աճի ներկա տենդենցներն անփոփոխ շարունակվեն, ապա... ամենահավանական հետևանքը ամենից առաջ կլինի հանկարծակի և վերահսկողության չենթարկվող անկումը ազգաբնակչության և արդյունաբերական աճի մեջ։

2. Աճի այս տենդենցները հնարավոր է փոփոխել և ստեղծել էկոլոգիական ու տնտեսական կայունության մի վիճակ, որը պահպանելի կլինի հեռու ապագայում։ Համաշխարհային հավասարակշռության վիճակը կարելի է նախագծել այնպես, որպեսզի երկրագնդի վրա ամեն մի մարդու հիմնական նյութական կարիքները բավարարվեն, և ամեն ոք հավասար հնարավորություն ունենա իրականացնելու իր անհատական ընդունակությունները։

3. Եթե աշխարհի ժողովուրդները որոշեն ավելի շուտ հասնել երկրորդ արդյունքին, քան առաջինին և որքան շուտ նրանք սկսեն աշխատել դրան հասնելու համար, այնքան նրանք շատ հնարավորություններ կունենան հաջողության հասնելու համար»[15]։

Առաջին եզրակացությունը որպես հոռետեսական տեսակետ ոչ մի տարակուսանք չի առաջացնում։ Բայց այստեղ առկա է առաջին հայացքից աննկատելի գաղափարախոսական տարր. կապիտալիզմի զարգացման տարերային բնույթի հետևանքներն ամբողջությամբ ներկայացվում են որպես հասարակության կենսագործունեության միակ եղանակ։ Սոցիալիզմի պլանաչափ հեռանկարային զարգացման բնույթը ոչ մի ընդհանրություն չունի «ահեղ դատաստանի» հոռետեսության հետ։ Ինչ վերաբերում է երկրորդ կետին, ապա այստեղ հեղինակները փաստերի և էկոլոգիական պրոբլեմների լուծման տրամաբանության ճնշման տակ ստիպված են խոստովանել այնպիսի արմատական սոցիալ-տնտեսական վերափոխումների անհրաժեշտությունը, որոնք, փաստորեն, անհամատեղելի են կապիտալիստական արտադրաեղանակի հիմնական օրենքների պահանջների հետ։ Երրորդ եզրակացությունը ամենից առաջ բարոյական կոչ է, քան գիտական պնդում։

Ասվածից երևում է, որ բուրժուական ֆուտուրոլոգները խոստովանում են կապիտալիզմի հասարակական հարաբերությունների վերափոխումների անհրաժեշտությունը, սակայն իրական կապիտալիզմը չի կարող գոյություն ունենալ և միաժամանակ բավարարել այն պահանջմունքները, որոնք մերժում են նրա հիմքերը։ Մյուս կողմից չպետք է մոռանալ, որ բուրժուական տեսաբանները կատարում են պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի սոցիալական պատվերը, ժխտում են, որ սոցիալ-տնտեսական և քաղաքական իմաստով սոցիալիստական հասարակարգը կապիտալիզմի այլընտրանքն է[16]։ Նրանք

---

[15] D. H. and D. L. Meadows, J. Randers, W. W. Behrens III, The Lilits to Crowth. A Report for Club of Rom's Project on the Predicament of Mankind, New York, 1972, p. 23—24.

[16] «Տեխնիկական» հոռետեսության գաղափարախոսությունը, որպես կապիտալիստական

հակված են հավատալ, որ սոցիալ-տնտեսական բարեփոխումների օգնությամբ դարդացած կապիտալիզմը կկարողանա հաղթահարել ներկա ճգնաժամային իրավիճակը։ Դրա համար, նրանց կարծիքով, չեն բավականացնում երկու բաղադրիչներ՝ երկարաժամկետ հեռանկարային նպատակ և այդ նպատակին հասնելու ցանկություն[17]։ Բայց բուրժուական իրավակարգի ջատագովները չեն ուզում տեսնել, որ կապիտալիզմը ամեն կերպ հակասում է այդ օբյեկտիվ պահանջներին[18]։ Ի դեպ, դա խոստովանում են ճշգրիտ գիտությունների ներկայացուցիչները։ Այսպես, օրինակ, Յու. Օդումը ընդգծում է. «էկոլոգիական սկզբունքները կազմում են, այսպես ասած, տեսական մոդելի հիմքը, բայց թե ինչպես պետք է զարգանա մարդու կիրառական էկոլոգիան և ինչպիսի ձևեր պետք է ընդունի, որպեսզի ժամանակակից աշխարհի և հասարակության ռեալ իրավիճակում (կապիտալիզմի պայմաններում—Շ. Մ.) հնարավոր լինի հասնել իսկապես բարձր նպատակների՝ այդ ամենը ներկայումս դեռ շատ մշուշապատ է»[19]։

Այլ դիրքորոշում ունեն «տեխնոլոգիական լավատեսության» կոնցեպցիայի ներկայացուցիչները։ Նրանք գտնում են, որ գիտության, տեխնիկայի, մարդկային հնարամտության և կապիտալիստական ձեռնարկատիրական գործունեության օգնությամբ կարելի է արմատապես լուծել մարդու կենսական միջավայրի պրոբլեմները։ Առավել ևս պարզ է նրանց վրդովմունքը, երբ գիտատեխնիկական առաջընթացը քննադատվում է «հոռետեսական» կոնցեպցիայի դիրքերից։ Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի գաղափարախոս, ամերիկյան հայտնի ֆուտուրոլոգ Հ. Կանը շատ է ափսոսում, որ «զարգացող տեխնիկան և տնտեսական աճը, որոնք իրենց ժամանակին համարվում էին դերադասելի նպատակներ և հաջողության խորհրդանիշեր, սկսում են գնահատվել որպես չարիք»[20]։ Սակայն կապիտալիստական կարգերի բացահայտ ջատագովները չեն կարող հաշտվել այդպիսի դրության հետ և քննադատելով «հոռետեսական» կոնցեպցիայի ներկայացուցիչներին, հայտարարում են. «Մենք մերժում ենք այդ դիրքորոշումը (և ենթադրում ենք, որ այդպես կվարվի նաև մարդկանց մեծամասնությունը) համենայն դեպս գալիք 10—20 տարվա համար։ Տեխնոլոգիական աճը և տնտեսական առաջադիմությունը ի վիճակի են մնացած ամբողջ աշխարհը հարուստ դարձնել և բուն տեխնոլոգիայի կատարելագործմանը զուգընթաց, զսպվածության համապատասխան քաղաքականու-

---

ճառարակարգի ջատագովության խիստ խեղաթյուրված եղանակ (ընդգծումը—Շ. Մ.) հակված է համոզելու, թե, իբր, ոչ մի, այդ թվում և հասարակական հարաբերությունների կոմունիստական վերափոխությունը ի վիճակի չէ հաղթահարելու արտադրության զարգացման ճակատագրական, կործանարար հետևանքները» (Т. И. Ойзерман, նշվ. աշխ., էջ 55)։

[17] D. Meadows et al., նշվ. աշխ., էջ 183—184։

[18] 1973 թ. լույս տեսավ «Հռոմի ակումբի» երկրորդ զեկուցագիրը, որը «պարունակում է արդի բուրժուական պրոպագանդայի ձևերի ստանդարտ հավաքածու. կապիտալիզմի ճգնաժամերը մեկնաբանվում են որպես մարդկության ճգնաժամեր, դասակարգային պայքարը ոտնահարվում է, դրա փոխարեն խոսվում է «աղքատ» և «հարուստ» երկրների միջև կոնֆլիկտների մասին» (К. Хагер, Научно-технический прогресс и политика социалистического государства в области науки, «Вопросы философии», 1976, № 1, стр. 39).

[19] Ю. Одум, Основы экологии, М., 1975, стр. 645.

[20] H. Kahn and B. Bruce-Briggs, Things to Come. Thinking about the Seventies and Eighties, New York, 1972, p. 206.

թյամբ ու նախագծերով, ինչպես նաև բավարար ռեսուրսների (գլխավորապես գրամի) առանձնացմամբ մենք ի վիճակի կլինենք հաղթահարել միջավայրի ապականման պրոբլեմը։ Տեխնոլոգիան հաճախ կարող է լուծել իր իսկ ծնած պրոբլեմները»[21]։ Այսպես են մտածում պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի ապագայի նկատմամբ լավատեսորեն տրամադրված բուրժուական տեսաբանները։ Սրանց համար ամենակարևորն է ապացուցել, որ «մարդկության առջև կանգնած էկոլոգիական երկրներբը հնարավոր է հաղթահարել կապիտալիստական մասնավոր սեփականատիրական կարգերի շրջանակներում»[22]։ Ավելացնենք, որ կապիտալիստական համակարգի խորացող ճգնաժամը և գերհզոր մոնոպոլիաները ի չիք են դարձնում «տեխնոլոգիական լավատեսների» ցանկությունը՝ բուրժուական հասարակարգի սահմաններում արմատապես լուծված տեսնելու արդի էկոլոգիական պրոբլեմները։

Մեր կարծիքով, էկոլոգիական պրոբլեմատիկայի գաղափարախոսական ասպեկտների բազմակողմանի և խոր վերլուծության ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ կարևոր հարցին։ Ինչպես ցույց է տալիս բուրժուական տեսաբանների էկոլոգիական աշխատությունների քննադատական վերլուծությունը, նրանցում չի շրջանցվում սոցիալ-տնտեսական պայմանների դերը էկոլոգիական պրոբլեմների ծագման և լուծման հարցերում, այլ այն յուրովի է ներկայացվում։ Այսինքն՝ մի կողմից ամբողջովին հերքում են սոցիալիստական արտադրական հարաբերությունների նշանակությունը այդ հարցերում և, մյուս կողմից, գտնում են, որ կապիտալիզմն ի վիճակի է հաղթահարելու էկոլոգիական ճգնաժամային իրավիճակը։ Այնինչ, էկոլոգիական պրոբլեմների գաղափարախոսական ասպեկտներին նվիրված սովետական փիլիսոփայական և սոցիոլոգիական գրականության մեջ հաճախ է պնդվում, որ արևմտյան էկոլոգիական հետազոտությունները ուռնահարում են հատկապես սոցիալական գործոնների դերը։ Դա նույնիսկ առանձնացվում է որպես բուրժուական էկոլոգիական հետազոտություններին բնորոշ գիծ։ Այսպես, օրինակ, սովետական հայտնի փիլիսոփա Ի. Ֆրոլովը գրում է. «Սակայն դրանցից շատերի (հոռետեսական կանխագուշակումների—Շ. Մ.) առանձնահատկությունը զուտ բացասական մոտեցում է, ապագայի վերացական դիտարկումն է յուրահատուկ «հասարակական վակուումում», հասարակական պայմանների ուռնահարումն է, որոնց դեպքում կարող են իրականացվել կամ չիրականացվել այս կամ այն առաջարկություններն ու նախագծերը»[23]։ Սակայն նման պնդումը հակասում է ոչ միայն բուրժուական էկոլոգիական ուսումնասիրություններին, այլև հենց հեղինակի այլ արտահայտություններին[24]։ Փաստորեն, նույնն է կրկնում Ի. Լապտևը, գտնելով, որ «տեխնոլոգիական լավատեսության» կողմնակիցների ընդդիմախոսները՝ «տեխնոլոգիական հոռետեսները», գիտատեխնիկական հեղափոխությանը մեղադրելով շրջապատող միջավայրի աննախադեպ ավերումների մեջ, նույնպես ուռնահարում են սոցիալ-տնտեսական պայ-

21 Նույն տեղում, էջ 214։

22 И. Т. Фролов, Նշվ. աշխ., էջ 108։

23 Նույն տեղում, էջ 97։

24 Նույն տեղում, էջ 108։

մանները»[25]։ Եթե նա ասեր, որ էկոլոգիական ֆուտուրոլոգիական կոնցեպցիաներում անտեսվում են հատկապես սոցիալիստական հասարակական հարաբերությունների դերն ու նշանակությունը, ապա դա ավելի ճիշտ կլիներ։ Մյուս կողմից, եթե բուրժուական գաղափարախոսները իրոք ժխտեին սոցիալ-տնտեսական պայմանների դերը, ապա ինչպես կկարողանային գոնե ձևականորեն պնդել, որ պետական-մոնոպոլիստական կապիտալիզմը կարող է լուծել միջավայրի էկոլոգիական պրոբլեմները։ Բուրժուական գաղափարախոսները գիտեն արտադրական հարաբերությունների միայն մի եղանակ՝ պետական-մոնոպոլիստական կապիտալիզմը, որը և նրանց հիմնական ելակետն է։

Պետական-մոնոպոլիստական կապիտալիզմի ջատագովության հարցում իրոք կա մի առանձնահատկություն. դա այն է, որ, չնայած «էկոլոգիական հոռետեսության» և «տեխնոլոգիական լավատեսության» ներկայացուցիչների միջև արտաքուստ գոյություն ունեցող տարաձայնություններին, նրանց միակ գաղափարախոսական ֆունկցիան կապիտալիստական արտադրաեղանակի պահպանումն է։ «Տեխնոկրատները,—ինչպես իրավացիորեն շեշտում է Վ. Կորոբեյնիկովը,— առաջարկում են այդ անել տնտեսական աճի հաշվին, «հակատեխնոկրատները»՝ տնտեսական հավասարակշռության հաստատմամբ»[26]։ Սրա հետ մեկտեղ, բուրժուական էկոլոգիական կոնցեպցիաների դեմ փաստարկված գաղափարախոսական պայքար մղելու համար անհրաժեշտ է ստեղծել մարդու և բնության փոխհարաբերության օպտիմալ ձևերի մարքսիստական կոնցեպցիա։ «ՍՍՀՄ և մյուս սոցիալիստական երկրների գիտնականների առջև,— ընդգծում է ակադեմիկոս Ե. Ֆյոդորովը,— խնդիր է դրված լրջորեն մշակել ընդհանրապես վերցրած մարդկային հասարակության և այն կազմող սոցիալական համակարգերի, շրջապատող միջավայրի հետ փոխներգործության զարգացման հնարավոր տարբերակների կոմպլեքսային կանխագուշակումներ, ստեղծել այդ պրոցեսի ճիշտ կոնցեպցիան, որը պետք է թե՛ մեր երկրում տնտեսական գործունեության հեռանկարային պլանավորման, և թե՛ ամբողջ մարդկության զարգացման հնարավոր ուղիների գնահատման համար»[27]։

Արդի էկոլոգիական պրոբլեմների գաղափարախոսական ասպեկտների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բուրժուական տեսաբաններն օգտագործելով շրջապատող միջավայրի արդի իրավիճակը, մի կողմից փորձում են ժխտել սոցիալիստական հասարակարգի առավելությունները, մյուս կողմից ապացուցել, որ կապիտալիստական արտադրաեղանակն ընդունակ է լուծելու ոչ միայն ներկա, այլև ապագա էկոլոգիական պրոբլեմները։ Այլ կերպ՝ բուրժուական հասարակարգը, ըստ նրա ջատագովների, ունի ոչ միայն ներկա, այլև ապագա, որը և արմատապես ժխտվում է մարքս-լենինյան ուսմունքի կողմից։ Ըստ մարքսիզմի, արդի էկոլոգիական պրոբլեմների լուծման մայրուղին ոչ մի ընդհանրություն չունի ո՛չ հասարակության ինդուստրիալ զարգա-

---

25 И. Д. Лаптев, Идеологические аспекты экологических проблем («Коммунист», 1975, № 17, стр. 67).

26 В. А. Коробейников, Технократические концепции и социальное маневрирование капитализма («Идейно-политические течения империализма». М., 1975, стр. 66).

27 Е. К. Федоров, Некоторые экологические аспекты научно-технической революции («Вестник Академии Наук СССР», 1974, № 10, стр. 45).

ցումից հրաժարվելու գաղափարախոսության և ո՛չ էլ «տեխնոլոգիական լավատեսության» գաղափարախոսության հետ։ Կ. Մարքսը դրել է. «Մարդիկ երբեք չեն հրաժարվի նրանից, ինչ ձեռք են բերել, բայց այդ չի նշանակում, որ նրանք չեն հրաժարվի այն հասարակական ձևից, որտեղ նրանք ձեռք են բերել որոշակի արտադրողական ուժեր։ Ընդհակառակը, որպեսզի չկորցնեն քաղաքակրթության պտուղները, մարդիկ ստիպված կլինեն փոխել բոլոր ժառանգված հասարակական ձևերը այն պահին, երբ հարաբերության (commerce) եղանակը այլևս չի համապատասխանի ձեռք բերած արտադրողական ուժերին»[28]։ Այստեղ փաստորեն պատասխան է արված նաև բուրժուական լավատեսական կոնցեպցիաների կողմնակիցներին։ Ըստ մարքսիզմի, արտադրողական ուժերի պահպանման համար անհրաժեշտ է մարդկանց հասարակական հարաբերությունների բոլոր ձևերի արմատական վերափոխում։ Բայց ինչպես վերևում ասացինք, «տեխնոկրատ լավատեսների» միակ նպատակը կապիտալիստական համակարգի պահպանումն է։ Հետևաբար, հակասություն է առաջանում ինդուստրիալ-տեխնոկրատական կոնցեպցիայի երկու հիմնական պահանջների միջև։ Մի կողմից գիտության և տեխնիկայի առաջընթաց առանց բացասական հետևանքների, մյուս կողմից կապիտալիզմի սոցիալ-տնտեսական կառուցվածքի պահպանում, որը ծնում է այդ բացասական հետևանքները։

Կոնկրետ-պատմական պայմաններում արդի էկոլոգիական պրոբլեմների լուծման իրական պրոցեսը համոզիչ ապացուցում է, որ միակ սոցիալ-տնտեսական կացութաձևը, որտեղ հնարավոր է միավորել վերոհիշյալ պահանջները, սոցիալիստական հասարակարգն է։ Այլ խոսքերով. մարդու կենսական միջավայրի պրոբլեմների լուծումը հնարավոր է գիտատեխնիկական հեղափոխության նվաճումները զարգացած սոցիալիզմի պատմական առավելությունների հետ օրգանապես միացնելով։

ИДЕОЛОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ СОВРЕМЕННОЙ ЭКОЛОГИЧЕСКОЙ ПРОБЛЕМАТИКИ

Ш. С. МАРТИРОСЯН

Резюме

В целях освещения идеологической деятельности буржуазных теоретиков вокруг экологической проблематики целесообразно исходить из двух взаимосвязанных аспектов этой деятельности: тактической и стратегической. Тактическое направление идеологической экспансии пытается доказать, что причины возникновения негативных проблем среды обитания человека обусловлены развитием технологии и, якобы, идентичны в различных социально-экономических системах. Стратегической задачей буржуазных концепций по этому вопросу становится доказательство того, что капитализм, якобы, способен решить актуальные и потенциальные экологические проблемы. Этой цели служат две ос-

[28] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 27, стр. 403.

новные линии в немарксистских экологических концепциях: линия т. н. «экологического пессимизма» и линия «технологического оптимизма».

Согласно учению марксизма-ленинизма, магистральный путь решения экологических проблем научно-технической революции ничего общего не имеет ни с идеологией отказа от индустриального развития общества (концепция «экологического пессимизма»), ни с идеологией «технологического оптимизма». Этот путь проходит через органическое соединение достижений НТР с историческими преимуществами развитого социализма.